

Խալաթյան Լիանա

Երևանի պետական համալսարան

Lianaaa.kh@mail.ru

Մելիքյան Ռուզաննա

Երևանի պետական համալսարան

ruzanna.melikyan@ysu.am

ԴԱՍԱՎԱՆԴՈՂԻ ԴԵՐԸ ՏԱԳՆԱՂԻ
ԶԳԱՑՈՒՄԻ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

ABSTRACT

THE ROLE OF THE TEACHER IN OVERCOMING LANGUAGE
ANXIETY

Foreign language anxiety is a common phenomenon in teaching any language. Teachers do not always identify anxious students, and often attribute their unwillingness to participate in speaking and writing tasks to such factors as lack of motivation, low performance and at the same time low-level knowledge of grammar and vocabulary.

This article aims to provide teachers with methods and strategies for diminishing foreign language anxiety and helping students to overcome it.

Key words: foreign language anxiety, anxiety, unwillingness, motivation, lack of knowledge, strategy.

РЕЗЮМЕ

РОЛЬ УЧИТЕЛЯ В ПРЕОДОЛЕНИИ ЯЗЫКОВОЙ ТРЕВОЖНОСТИ

Чувство тревожности при изучении иностранного языка – распространенное явление. Преподаватель не всегда понимает волнение студентов и часто их нежелание участвовать в устном и письменном опросах приписывает другим факторам, как-то: отсутствие мотивации, неудачная презентация наряду с плохим знанием грамматики и небогатым словарным запасом.

Цель статьи - ознакомить преподавателей со стратегиями и методами, которые помогут студенту при изучении иностранного языка снизить чувство тревожности и преодолеть его.

Ключевые слова: тревожность иностранного языка, тревожность, нежелание, мотивация, недостаток знания, стратегия.

ԱՄՓՈՓՈՒՄ

Օտար լեզու սովորելիս տազնապի զգացումն ընդհանուր երևույթ է: Դասավանդողները միշտ չէ, որ հասկանում են հուզված ուսանողներին և հաճախ նրանց անպատրաստակամությունը՝ մասնակցելու գրավոր ու բանավոր առաջադրանքներին, վերագրում են մի շարք գործոնների, ինչպիսիք են մոտիվացիայի բացակայությունը, ոչ հաջող ներկայացումը և միևնույն ժամանակ քերականական գիտելիքի և բառապաշարի պակասը:

Հոդվածի նպատակը դասավանդողներին ծանոթացնելն է մեթոդներին և ռազմավարություններին, որոնք կնվազեցնեն օտար լեզու սովորելու տազնապի զգացումը և կօգնեն ուսանողներին հաղթահարելու այն:

Բանալի բառեր՝ օտար լեզվի տազնապ, հուզմունք, անպատրաստակամություն, մոտիվացիա, գիտելիքի պակաս, ռազմավարություն

Երկար տարիներ աշխատելով որպես օտար լեզվի դասախոս տարբեր ֆակուլտետներում և առնչվելով ուսանողների հետ՝ հետաքրքիր ուսումնասիրություններ ենք կատարել: Ինչպես գիտենք, օտար լեզվին տիրապետելը ներառում է ավելին, քան բառապաշարը և քերականական կանոններ սովորելը: Անհրաժեշտ է զարգացնել հիմնական, կարևոր հմտությունները՝ կարդալը, գրելը և խոսելը: Մա կարծես բավարար է օտար լեզուն սովորելու համար: Մակայն լեզուն սովորողները հաճախ ստիպված են անել ավելին, քան սահմանափակվել վերը նշվածով:

Առաջինը, որ կարող է մեծապես ազդել լեզուն սովորելու վրա, մտածելակերպն է, ինչպես նաև տարբեր զգացումները և հուզականությունը, որ նրանք ունենում են լեզուն սովորելու ժամանակ: Որոշ գիտնականներ նշում են, որ օտար լեզու սովորելը կարող է լինել տրավմատիկ, առաջացնել սթրեսի զգացում, անհանգստություն, վախ՝ հատկապես բանավոր շփման ժամանակ: Այն կոչվում է օտար լեզվի տագնապ: Հետազոտությունները ցույց են տալիս, որ օտար լեզվի յուրացման տագնապը կարևորագույն խնդիր է ամբողջ աշխարհում երկրորդ լեզվի դասավանդման գործընթացում: Այն ունի հոգեբանական կառուցվածք և կարող է բնութագրվել որպես ինքնահաստատման բարդույթ՝ կապված հավատքի, սովորույթների և անհատի բնավորության հետ: Օտար լեզվի տագնապը հիմնական պատճառներից մեկն է, որը որոշում է լեզվի ընկալման աստիճանը և դառնում հաջողության հասնելու հիմնական գործոններից մեկը: Այս խնդրի ուսումնասիրությունը շատ կարևոր է, քանի որ այն կարող է ունենալ բացասական ազդեցություն ուսանողի առաջադիմության վրա: Հասկանալով և ուսումնասիրելով օտար լեզվի տագնապը՝ հնարավոր կլինի ստեղծել բարենպաստ միջավայր երկրորդ լեզու սովորողի համար և հասնել շոշափելի արդյունքների:

Ինչպես նշեցինք, օտար լեզվի տագնապն ունի հոգեբանական հիմք, որը հոգեբանները նկարագրում են որպես վախ, որն

անուղղակի կերպով համակցվում է կոնկրետ առարկայի հետ [Hilgard Atkinson,1971]: Այս զգացումը բնագործեն զգում են գրեթե բոլորը: Մա բավական բարդ և բազմագործառույթ երևույթ է (Young,1991): Ամերիկացի լեզվաբան Յանգը նշում է օտար լեզվի լսարանային տազնապի վեց տեսակ՝

1. անձնական և միջանձնային տազնապ
2. սովորողի կարծիքը (belief) լեզու սովորելու մասին
3. դասավանդողի կարծիքը լեզու սովորելու մասին
4. սովորող-դասավանդող փոխհարաբերություն
5. լսարանային ընթացակարգ
6. ստուգում:

Որոնք են պատճառները:

Այն հիմնականում կապված է սեփական անձի ընկալման և շրջապատի ընկալման հետ, այսինքն՝ սովորողը վախի զգացում կարող է ունենալ երկուստեք՝ ինքը կարող է չհասկանալ, և որ իրեն կարող են չհասկանալ: Տազնապ կարող են առաջացնել հաղորդակցման անկարողությունը, թեստերի տվյալները, բացասական գնահատականը, ուսուցման միջավայրում ձախողվելու վախը, նախորդ անհաջող, բացասական փորձը, բացասական մտածելակերպը, երբ քո մոտեցումը այնպիսին է, որ լեզուն սովորելը դժվար է, որ դու չես կարողանա հաղթահարել դժվարությունները, ավելի շատ կհուզվես, և տազնապի զգացումն ավելի ուժեղ կլինի, ինչպես նաև գիտելիքների՝ բառապաշարի և քերականության պակասը:

Կարևորագույն պատճառներից է նաև դասավանդողի գործոնը. նրա վերաբերմունքը ուսանողի, ինչպես նաև առարկայի նկատմամբ: Պետք է նշել, որ լեզուն սովորելու ընթացքում սովորողի մտածելակերպն ու մշակույթը նույնպես կարևոր են:

Ավելի երիտասարդ տարիքի սովորողները հեշտ են հաղթահարում տազնապի զգացումն օտար լեզու սովորելու ընթացքում, ավելի հեշտ են ինտեգրվում դասապրոցեսին՝ խաղերի

միջոցով, խմբակային աշխատանքների ժամանակ: Պետք է նշել՝ որքան ցածր է օտար լեզվի իմացության մակարդակը, այնքան տազնապի զգացումը ցածր է, և, համապատասխանաբար, որքան բարձր է օտար լեզվի իմացության մակարդակը, այնքան ավելի բարձր է տազնապի զգացումը:

Ավելի բարձր տարիքի սովորողներին անհրաժեշտ է տեսանելի մոտիվացիա, նրանք հաճախ խուսափում են բարձրաձայն արտահայտվելուց՝ վախենալով սխալվելուց, հուզվում են խոսելու ընթացքում, խառնվում, դժվարանում են վերհիշել անցած բառերը և նյութերը: Բայց պետք է նշել, որ այս տարիքային խմբերում նրանք ավելի մեծ պատասխանատվությամբ են մոտենում դասապրոցեսին, ավելի մեծ կարևորություն են տալիս անցած նյութը ճիշտ ու տեղին օգտագործելուն և այսպիսով գիտակցաբար հեշտ են հաղթահարում տազնապի զգացումը:

Պետք է նշել, որ բոլոր օտար լեզու սովորողները լսարան են մտնում մեծ սպասումներով՝ վստահելով դասավանդողի պատրաստվածությանը, պրոֆեսիոնալիզմին և ուսուցման հատուկ մեթոդներին, ինչպես նաև լսարանի միջավայրին:

Լսարանի միջավայր եզրույթն օգտագործվում է նկարագրելու համար մի շարք չափորոշիչներ, որտեղ ներառվում են սովորողի ներկայությունը, հոգեբանական միջավայրը, ինչպես նաև տարբեր կառուցվածքային գործոններ, ինչպիսին են դասավանդողի բնավորությունը և վարքագիծը [MacIntyre & Gardner, 1991]: Հաճախ լսարանի սխալ միջավայրն ուսանողի մեջ առաջացնում է անհանգստություն և տազնապ: Դա կարող է լինել դասավանդողի գործոնը կամ շրջապատող անձանց հայացքները:

Ուսումնասիրություններ ենք կատարել երկու տարբեր խմբերում: Ուսանողներին տրվել են հարցաշարով թերթիկներ: Նրանք պետք է պատասխանեին օտար լեզու սովորելու ընթացքում տազնապի և հուզմունքի մասին հարցերին: Հետազոտությունների արդյունքում ունեցանք մեր ուսանողների՝ օտար լեզվի տազնապի մասին

նախնական պատկերացում, թե ինչից են ավելի շատ վախենում, և ինչ կիրառելի մեթոդներ կարելի է օգտագործել լսարանում՝ թեթևացնելու այդ զգացումը:

1.	անհանգստություն, անգամ եթե լավ պատրաստված է դասին	74%
2.	որքան ավելի լավ են պատրաստված գրավոր թեստին, այնքան ավելի են շփոթվում	70%
3.	սրտխփոց, երբ կանչում են գրատախտակի/ամբիոնի մոտ	65%
4.	անձանթ նյութը չհասկանալու վախ	50%
5.	վստահության պակաս, երբ պետք է պատասխանել դասավանդողին օտար լեզվով	47%
6.	օտար լեզվի լսարանում ավելի լարված են, քան մյուս լսարաններում	40%
7.	խոսելիս ավելի են հուզվում, քան գրելիս	40%
8.	սխալվելու վախ	35%
9.	դասին չհաճախելու ցանկություն	30%

Արդյունքներ

Բացահայտումներ

1. Չնայած նրան, որ տագնապի զգացումը շատ մեծ է օտար լեզվի դասերի ժամանակ, ուսանողները հաճույքով են հաճախում դասերին: Նրանք ունեն օտար լեզու սովորելու շարժառիթ, հաղթահարում են վախի զգացումը և հաճույք են ստանում դրական արդյունքներից:

2. Չնայած բանավոր խոսքը տագնապ է առաջացնում այն ներկայացնելիս, նրանք սիրով են ներկայացնում նյութը՝ օգտագործելով տարբեր միջոցներ:

3. Մեր կատարած հարցումները ցույց են տալիս, որ չնայած բանավոր խոսքից ուսանողները ավելի շատ են վախենում, գրավորի ժամանակ ավելի են դժվարանում:

Վախի զգացումը և հուզմունքը վիատեցնում են սովորողին և չեն մղում հետագա գործողությունների: Դա կասկած է առաջացնում նրանց կարողությունների հանդեպ, թե արդյոք նրանք կարող են լեզու սովորել և ի վերջո ստիպում նրանց հրաժարվել սովորելուց: Դրանից խուսափելու համար կան մի քանի խորհուրդներ՝ օտար լեզվի տազնապը հաղթահարելու համար: Լուծումները կախված են ինչպես ուսանողից, այնպես էլ դասավանդողից:

1. Ուսանողը, առաջին հերթին և ամենակարևորը, պետք է սովորելու ցանկություն ունենա:

2. Լինի մոտիվացված: Գիտակցի, որ կան ոչ իրական սպասումներ, ինչպես, օրինակ՝ նշաձողը դնում է բավական բարձր և ուզում է հասնել դրական արդյունքների կարճ ժամանակահատվածում, որի հետևանքը կարող է լինել հիասթափությունը:

3. Մրցակցային մոտեցմանը պատրաստ լինի:

4. Կարողանա մասնակցել խմբակային աշխատանքին: Անձնական փոխհարաբերությունները թե՛ դասավանդողի և թե՛ խմբի անդամների հետ կարևոր են:

5. Նախապես պետք է պատրաստված լինի դասին: Անպատրաստ դասին ներկայանալը հուզմունքի պատճառներից մեկն է:

6. Չվախենա սխալներ անելուց, բայց միևնույն ժամանակ ուշադիր լինի սխալներն ուղղելուն և չկրկնի հաջորդ անգամ:

7. Պատրաստ լինի հանգիստ ընդունելու դասավանդողի օբյեկտիվ կարծիքը և քննադատությունը:

Այժմ քննարկենք դասավանդողի դերն օտար լեզվի տազնապի հաղթահարման գործընթացում:

1. Առաջին հերթին դասավանդողը պետք է ընդունի, որ լեզու սովորելը բավականին սթրեսային է ուսանողների համար:

2. Պետք է ստեղծել ջերմ, հանգիստ լսարանային մթնոլորտ:

3. Նյութը ներկայացնելիս կարելի է համեմատություն անել մայրենի լեզվի հետ: Եթե անհրաժեշտ է, լսարանում խոսել մայրենի լեզվով, որպեսզի ուսանողն իրեն հանգիստ և հարմարավետ զգա:

4. Ուսանողների նկատմամբ անհատական մոտեցումը պարտադիր է, քանի որ կան սովորողներ, որոնք ավելի դանդաղ են ընկալում և ավելի շուտ են հուսահատվում ու հիասթափվում: Կան ավելի ակտիվ ուսանողներ, որոնք ավելի շատ ուշադրության են սպասում: Պետք է դասապրոցեսը կազմակերպել՝ հաշվի առնելով այս բոլոր հանգամանքներն ու նրբությունները:

5. Պետք է ճիշտ կազմակերպել թիմային աշխատանքը: Խմբում ընդգրկել տարբեր ուսանողների, որպեսզի աշխատանքը լինի արդյունավետ:

Խրախուսելը և քննադատությունը կարևոր են, սակայն դրանք պետք է զգույշ և նրբանկատորեն մատուցել:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ որոշ չափով տազնապի զգացումն անհրաժեշտ է օտար լեզու սովորելու համար, բայց հարց է՝ ի՞նչ չափով: Դասախոսը պետք նաև ստեղծի լարված մթնոլորտ լսարանում, հակառակ դեպքում ուսանողը կթուլանա և չի աշխատի: Ուղիղ համեմատական կա լարվածության և հաջողության միջև, բայց կա մի կետ, որին հասնելով պետք կանգ առնել: Օրինակ՝ ուսանողին կանչում ենք ամբիոնի մոտ պատասխանելու, դա կարող է համարվել լարվածության գագաթնակետ, և, չնայած դասը լավ իմանալուն, նա շփոթվում է ու կաշկանդվում: Դասավանդողը կարող է օգնել թուլացնելու այդ լարվածությունը՝ հարցեր տալով, սկսելով հեշտից, կամ դասապրոցեսին մասնակից դարձնել մյուս ուսանողներին՝ ժամանակ տալով ամբիոնի մոտ կանգնած ուսանողին հաղթահարելու տազնապի զգացումը:

Մխալների ուղղում: Ուսանողի ուշադրությունը պետք է շեղել բացասական մտքերից: Ավելի շատ ուշադրություն դարձնել արված աշխատանքին, ոչ թե սխալներին: Դասը պատասխանելու ժամանակ

կարիք չկա անմիջապես ուղղել սխալը, եթե այն կոպիտ չէ և չի գրավում մյուս ուսանողների ուշադրությունը, քանի որ ուղղումը շեղում է նրա միտքը, և նա դժվարանում է շարունակել: Մխալների ուղղումը կարելի է անել պատասխանից հետո՝ խմբի ուշադրությունը կենտրոնացնելով դրանց քննարկման վրա, նշելով, որ լեզուն սովորելիս սխալներն անխուսափելի են: Հիմնականում լեզուն սովորողները վախենում են սխալներից, դիտարկելով դրանք որպես սպառնալիք իրենց ես-ին: Գործնականում սխալների ուղղումը կարող է օգնել նրանց ավելի լավ ընկալելու լեզուն: Ուստի դասավանդողը պետք է ուշադիր և զգուշավոր լինի, քանի որ եթե դա կատարվի անմիջապես և ուղիղ, դա կարող է վիրավորել սովորողի ինքնասիրությունը և ազդել նրա ինքնավստահության վրա: Դասավանդողը պետք է մտածի հատուկ ձևակերպումների մասին: Մեղմասությունները (Euphemisms) կարող են օգնել դասավանդողներին լուծելու այս խնդիրները, որոնք ոչ միայն պարզաբանում են սխալները, պահպանում սովորողի ինքնասիրությունը, այլ նաև բարձրացնում նրա ինքնավստահությունը: Ինչպես օրինակ՝ «Լավ կլինի նորից մտածես հարցի շուրջ», կամ «Միգուցե նորից փորձե՞ս»:

Հարցեր տալ: Հարցեր տալու մեղմասական ձևը մոտիվացնում է սովորողներին և օգնում նրանց ավելի հանգիստ զգալ լսարանում: Հատկապես մեղմասական հարցերը խրախուսում, քաջալերում են սովորողներին ինքնական պատասխանել հարցերին, օրինակ՝ «Միգուցե փորձե՞ս պատասխանել», կամ «Կարող ես՞ կիսել քո տեսակետը մեզ հետ»: Նմանատիպ հարցերը, դիմումները ավելի են նվազեցնում դասավանդողի և սովորողի միջև հեռավորությունը, ինչպես նաև՝ հեռացնում վախի, տագնապի զգացումը:

Մեկնաբանություններ անել: Մեկնաբանություններ անելիս նույնպես կարևոր է ուշադրություն դարձնել ձևակերպումների վրա, քանի որ դրանք անմիջական ազդեցություն ունեն սովորողի զգացմունքների վրա: Որքան շատ մեղմասություններ կիրառվեն

դասավանդողի խոսքում, այնքան ավելի դրական կլինի սովորողի մոտեցումը լեզվին, այն կօգնի նրան հաղթահարելու օտար լեզվի հուզմունքը, ինչպես նաև կստեղծի կառուցողական լսարանային մթնոլորտ: Այսպիսով դասավանդողը օգնում է, որ ուսանողը և՛ հասկանա իր սխալները, և՛ միննույն ժամանակ գոհ մնա իր աշխատանքից:

Ուսանողակենտրոն դաս. դասավանդողը պետք է դասը պլանավորի ուսանողի տեսանկյունից և հասկանա, թե տվյալ խմբում ինչպես կազմակերպի դասը՝ ստեղծել ավելի լարված մթնոլորտ, թե հանգիստ:

Օգտակար կլինի դասի ժամանակ քննարկման թեմա դարձնել տազնապի զգացումն օտար լեզու սովորելու ընթացքում: Ուսանողը պետք է իմանա, որ դասախոսը տեղյակ է իր տազնապի զգացումի մասին և որ ինքը մենակ չէ, որ դա նորմալ երևույթ է, և այն կարող է ունենալ յուրաքանչյուր օտար լեզու սովորող: Պետք է համեմատություն անել մայրենի լեզվի հետ, նշել, որ անգամ մայրենի լեզվով խոսելիս նրանք նույնպես սխալներ են անում: Մխալներ են անում նույնիսկ լեզվակիրները: Քննարկման ժամանակ նշել, որ օտար լեզու սովորելը երբեք միանգամից չի լինում, դա աստիճանական, երկարատև և հուզաշատ գործընթաց է:

Ժամանակ առ ժամանակ դասախոսը պետք է իրեն պատկերացնի որպես ուսանող:

Հարց ու պատասխան մեթոդը նույնպես արդյունավետ է լարվածությունը թուլացնելու համար՝ հատկապես երբ հարցը տալիս է խմբակիցը և ոչ թե դասախոսը: Այսպիսով՝ դասավանդողը կողքից է կառավարում դասը՝ շատ չմասնակցելով դասապրոցեսին, բայց ուշադիր հետևելով: Ուսանողները գույգերով գալիս են գրատախտակի մոտ և իրար հարցեր տալով պատասխանում դասը: Վերջում դասավանդողը գնահատում է նրանց աշխատանքը՝ նրբանկատորեն անելով ուղղումներ և նկատողություններ:

Վերջում ուզում ենք ներկայացնել մի քանի գործնական քայլեր, որոնք կարող են օգտակար լինել լսարանում տազնապի զգացումը հաղթահարելու համար.

1. խորը շունչ քաշել պատասխանելուց առաջ
2. կենտրոնանալ մի թեմայի շուրջ
3. մտավոր պատկերացնել՝ ինչի մասին պետք է խոսել
4. ելույթը նախօրոք փորձել հայելու առաջ, մի քանի անգամ բարձրաձայն կրկնել:

Նոգեբան Պատրիկ եղբւաղը առաջարկում է հետաքրիր մեթոդ կենտրոնանալու և լարվածությունը թուլացնելու համար, որը կոչվում է 3-3-3[**Edblad Patrik**, 2020]

1. արտաբերել երեք հնչյուն, որ դու լսում ես
2. շարժել մարմնի երեք մաս
3. նշել երեք առարկա, որ տեսնում ես:

Ամփոփելով վերոհիշյալ դրույթները, պետք է ընդգծել, որ օտար լեզվի դասավանդման տազնապը հաճախ հանդիպող երևույթ է և այն զգում են գրեթե բոլոր օտար լեզու սովորողները, թե՛ փոքր, թե՛ մեծ, թե՛ սկսնակ, և թե՛ բավական գիտելիք ունեցողները: Դասավանդողը սովորողի հետ պետք է հասկանա խնդիրը և միասին համագործակցելով, ուղիներ մշակեն այն հաղթահարելու համար: Կախված սովորողի անձի առանձնահատկություններից՝ մոտեցումը կարող է լինել և՛ անհատական, և՛ խմբակային:

Այս հոդվածում մենք փորձել ենք տալ երևույթի նկարագիրը և մի քանի գործնական խորհուրդներ շարադրել, որոնք կօգնեն մեղմացնել օտար լեզու սովորելու տազնապի զգացումը լսարանում և բարձրացնել ուսման որակը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Alrabai, F.** (2015), The Influence of teachers' anxiety-reducing strategies on learners' foreign language anxiety. *Innovation in Language Learning and Teaching*.

2. Ansari. M. S. (2015) Speaking Anxiety in ESL/EFL Classrooms: A Holistic Approach and Practical Study.

3. **Ch. Doran** (2017), Rage and Anxiety in the Split between Freud and Jung. <https://www.mdpi.com/2076-0787/6/3/53/htm>

4. **Edbladd Patrik** (2020), The 3-3-3 Method: A Simple Framework to Achieve Your Goals. <https://patrikedblad.com/productivity/the-3-3-3-method/>

5. **Hilgard Atkinson, & Atkinson**, (1971), Language Learning Research Club, University of Michigan.

6. **D. MacIntyre, R. Gardner** (1991), Methods and Results in the Study of Anxiety and Language Learning: A Review of the Literature. <https://onlinelibrary.wiley.com/doi/10.1111/j.1467-1770.1991.tb00677.x>

7. **Qi Pan**. A Tentative Study on the Functions and Applications of English Euphemism. <https://www.academypublication.com/issues/past/tpls/vol03/11/25.pdf>.

8. **Young D.** (1991), “Creating a Low-Anxiety Classroom Environment: What Does Language Anxiety Research Suggest?” The Modern Language Journal 75.

9. **Բարաթյան Ն.**(2011), Անզլերեն-հայերեն բառարան. Երևան:

10. **Գրիգորյան Խ.**, **Գրիգորյան Զ.** (2010), Անզլերեն-հայերեն արդի բառարան. Երևան:

11. **Համբարձումյան Ն., Լազարյան Ա., Հայրսպետյան Ա.** (2007), Անզլերեն-հայերեն բառարան. Մակմիլան Արմենիա, Երևան:

Ռուզաննա Մելիքյան - միջազգային հարաբերությունների ֆակուլտետ, դիվանագիտական ծառայության և մասնագիտական հաղորդակցման ամբիոն

Ruzanna Melikyan–Faculty of international relations, the chair of Diplomatic service and communication

Рузанна Меликян - Факультет международных отношений, кафедра дипломатической службы и коммуникации

Լիանա Խալաթյան - Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետ, անգլերենի թիվ 1 ամբիոն

Liana Khalatyan - Faculty of European Languages and Communication, English Chair №1

Лиана Халатян –Факультет европейских языков и коммуникации, кафедра английского языка № 1

Ներկայացվել է խմբագրություն՝ 07.06.22, տրվել է գրախոսության՝ 13.06.22 - 20.06.22, երաշխավորվել է ԵՊՀ եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի անգլերենի թիվ 1 ամբիոնի և պարբերականի խմբագրակազմի կողմից, ընդունվել է տպագրության՝ 23.06.22: